



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Ֆրանսայի նորակազմ թեմի դիւանը ուրախութիւնն ունի յայտնելու, որ սոյն թուականի 17 փետրուարին, հրաւերով եւ նախագահութեամբ առաջնորդական տեղապահ Բարձրաշնորհ Տ. Գիւտ արքեպս. Նազգաշեանի, Փարիզի Առաջնորդարանի Ն. Ֆրէնկեան սրահին մէջ, տեղի ունեցաւ թեմիս Պատգամաւորական անդրանիկ ժողովը, որ նախ ընտրեց իր դիւանը, յանձինս՝

Ատենապետ տիար Կարպիս Զրբաշեանի,

Փոխատենապետ տիար Կարապետ Սայապալեանի,

Ատենադպիրներ՝ տիարք Էդուար Մարտիրոսեանի եւ Հանրի Սիրանեանի:

Ապա տեղի ունեցաւ Թեմական Խորհուրդի ընտրութիւնը, հետեւեալ կազմով.

Տէր Կոմիտաս վրդ. Յովնանեան,

Տէր Գրիգոր աբեղայ Խաչատրեան,

Տիկին Սոնա Ադամեան,

Տօքթ. Ռոպէր Ազիլազեան,

Տիար Գեղամ Թորոսեան,

Տիար Արմէն Իլյիզեան,

Տիար Կարօ Յովսէփեան,

Տիար Ժիլպէտ Տէրտէրեան,

Տիար Սուրէն Փանոսեան,

Տիար Ժազ Փանոսեան

Տիար Գրիգոր Փափազեան:

Ժողովի անարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հրաւիրուած է Ֆրանսա մասնակցելու Հայաստանի Տարուան նուիրուած պաշտօնական հանդիսութիւններուն, իր օրհնաբեր ներկայութեամբ գնահատեց եւ շնորհաւորեց նորընտիր Պատգամաւորական ժողովի պատուարժան անդամներն ու դիւանը, ինչպէս նաեւ նորընտիր Թեմական Խորհուրդի անդամները եւ յաջողութիւն մաղթեց անոնց կատարելիք ապագայ աշխատանքներուն:

ԴԻՒՆ ՊԱՏԳԱՄԱՐՈՐԴԱՆ ԺՈՂՈՎԻ



ՎԵՆՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԸ ՖՐԱՆՍԻԱԿԻ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՍՏԱՎՈՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՏ ՆԱՆԳԻՊՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ



ԽՐԱՆՄԱՅԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ